ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«05» սեպտեմբերի 2025թ. N 134-Ա

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՄ ԱՅԴ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման N2 հավելվածի 20-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց գիտելիքների ստուգման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել սույն հրամանի 1-ին կետով ստեղծված հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

9/5/2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N1

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2025 թվականի սեպտեմբերի 5-ի

N 139-Ա հրամանի

ԿԱԶՄ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՄ ԱՅԴ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Նաիրի Հարությունյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի խորհրդական (հանձնաժողովի նախագահ)

Դավիթ Մարգարյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավաբանական վարչության պետ

Գրիգոր Ծատուրյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության քաղաքականության և գիտատեխնիկական նորմավորման վարչության շինարարության քաղաքականության և գնագոյացման բաժնի պետ

Կարեն Բակոյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետ

Աշոտ Հովսեփյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների բաժնի պետ

Դավիթ Հովհաննիսյան - ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի քաղաքաշինական գործունեության վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ

Վարազդատ Հովհաննիսյան - Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կրթության որակի ապահովման և զարգացման կենտրոնի ղեկավար

Իրինա Վանյան - Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռազմավարական պլանավորման և որակի ապահովման բաժնի ղեկավար

Տանյա Արզումանյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հավելված N2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2025 թվականի սեպտեմբերի 5-ի
N134-Ա հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱՄ ԱՅԴ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող կամ այդ գործառույթն իրականացնելու ցանկություն ունեցող անձանց գիտելիքների ստուգման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշմամբ և սույն աշխատակարգով:

2. Հանձնաժողովի ձևավորման նպատակը

3. Հանձնաժողովի ձևավորման նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման համաձայն՝ բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող՝ համատիրության կառավարիչ, հավատարմագրային կառավարիչ, լիազորագրային կառավարիչ հանդիսացող ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձ հանդիսացող կառավարման մարմնի ֆիզիկական անձ հանդիսացող կառավարչի մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների հիման վրա անձանց վերապատրաստման, նրանց գիտելիքների ստուգման (թեստավորման) հետ կապված աշխատանքների կազմակերպումն է:

3. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

4. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման համաձայն:

5. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանժնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

6. Հանձնաժողովի կողմից թեստավորման աշխատանքները կազմակերպվում են վերապատրաստման դասընթացի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որի ժամանակ թեստավորվում են նաև այդ ժամանակահատվածում ինքնուրույն վերապատրաստված և ՀՀ քաղաքաշինության կոմիտե դիմում ներկայացրած անձինք: Իսկ վերապատրաստման դասընթաց չկազմակերպվելու դեպքում ինքնուրույն վերապատրաստված անձանց թեստավորումն իրականացվում է այդ նպատակով առնվազն 20 դիմում ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Սույն հրամանի 6-րդ կետ համաձայն թեստավորման ժամանակ թեստում ընդգրկվող հարցերի հարաբերակցությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 5-րդ կետի 2-5-րդ ենթակետերով սահմանված իրավական ակտերի պահանջներին համապատասխան, հետևյալ համամասնություններով՝

1) իրավական գիտելիքների մասով՝ 8 հարց

2) տեխնիկական գիտելիքների մասով՝ 4 հարց,

3) վարչարարական գիտելիքների մասով՝ 4 հարց,

4) ֆինանսական գիտելիքների մասով՝ 4 հարց:

8. Հանձնաժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամներից առնվազն 7-ը:

9. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար կարող են հրավիրվել համապատասխան մարզպետների աշխատակազմերի, համայնքների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում փորձառություն ունեցող հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

10. Թեստավորման անցկացման վայրի, օրվա, ժամի և օրակարգի մասին հանձնաժողովի անդամները տեղեկացվում են նիստի անցկացումից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

11. Լրացուցիչ նյութերի առկայության պարագայում դրանք հանձնաժողովի անդամներին են փոխանցվում սույն հավելվածի 10-րդ կետում նշված օրակարգի հետ միասին:

4. Հանձնաժողովի որոշումների արձանագրումը և գործավարությունը

12. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի կազմումը և որոշումների արձանագրումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարը:

13. Հանձնաժողովի արձանագրությունները ստորագրվում են այն կազմելուց անմիջապես հետո՝ հանձնաժողովի մասնակից անդամների կողմից:

14. Հանձնաժողովի տեխնիկական և կազմակերպչական աշխատանքների իրականացումն ապահովվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջոցով:

5. Հանձնաժողովի գործունեության դադարումը

15. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների համաձայն: